ՀՀ ՆԳ նախարար,
Արփինե Սարգսյանին
«Հայրենիներ» հ/կ նախագահ,
Սամիկոն Խուրշուդյանից
Հասցե՝ ք.Երևան Դավթաշեն 1թ. 34/31
Հեռ. 098 59 89 19/ 091 59 89 19

## Աշխատանքների ամփոփ ներկայացում

Հարգելի տկն Սարգսյան,

Լինելով Միլիցիայի Հատուկ Նշանակության ջոկատի հրամանատարի տեղակալ Աշոտ Խուրշուդյանի (զոհված 1994-ին մարտական գործողությունների ժամանակ) որդին՝ որպես իրավաբան ու իրավապաշտպան մշտապես կանգնած եմ եղել ՀՀ ՆԳՆ զարգացման, առաջընթացի ու համակարգի առողջացմանն ուղղված բոլոր միջոցառումների կողքին: Մշտապես սատար կանգնել զոհված և վիրավոր ոստիկանների ընտանիքներին, խրախուսական պարգևների արժանացրել համակարգում իրենց սխրանքով աչքի ընկած տղաներին:

Ձեզ եմ ներկայացնում վերջին տարիների ընթացքում «Հայրենիներ» հ/կ-ի կատարած այն աշխատանքները, որոնք առնչվում են ՀՀ ՆԳՆ-ին:

Ինչպես 2022-ին այնպես էլ 2023-ին շարունակվում են 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված ոստիկանների, հերոսների տներ մեր այցելությունները: Այցելել ենք Արթիկ քաղաքի զոհված ոստիկանների բնակարաններ:

2023 թվականի ապրիլ-հունիս ամիսներին իրավապաշտպան գործողություններ ենք իրականացրել տարաբնույթ բողոքի ակցիաների ժամանակ՝ մեծացնելով քաղաքացի-ոստիկան հարաբերություններում առկա վստահությունը:

2023 թվականի օգոստոսի 15-ից 20-ը մասնակցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի ընդունելության ստուգումներին որպես հանձնաժողովի անդամ:

2023 թվականի օգոստոսի 22-ից 31-ը մասնակցել ենք ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի քոլեջի և ուսումնական կենտրոնի ընդունելության ստուգումներին որպես հանձնաժողովի անդամ:

2023թ.-ի դեկտեմբերին «Հայրեններ» հ/կ-ի 14-րդ ամենամյա մրցանակաբաշխության շրջանակներում պատվոգրերի և պարգևների են արժանացել ոստիկանության համակարգի պարեկապահակային ծառայության տղաները:

2024թ.-ի հունվարին ԱՄՆ-ում մասնակցել ենք Մարդու իրավունքների հայկական խորհրդի նիստին (USACHR), որտեղ հանդես եմ եկել «Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն» թեմայով դասախոսությամբ:

2024թ.-ի դեկտեմբերին «Հայրեններ» հ/կ-ի 15-րդ ամենամյա հոբելյանական մրցանակաբաշխության շրջանակներում հատուկ պարգևների են արժանացել ՆԳՆ վաստակաշատ աշխատակիցները:

2019թ.-ից «Հայրեններ» հ/կ-ն սերտ համագործակցում է ՀՀ Ոստիկանության, ապա նաև ՀՀ Ներքին Գործերի նախարարության հետ: Այս տարիների ընթացքում՝ որպես ՆԳՆ հասարակական խորհրդի անդամ յուրաքանչյուր տարի մասնակցել եմ ՀՀ Ոստիկանական կրթահամալիրի քոլեջի և ուսումնական կենտրոնի ընդունելության քննությունների ստուգումներին՝ լինելով նաև հանձնաժողովի անդամ (2025-ին հանձնաժողովի փոխնախագահ): Պետք է նշեմ, որ քննություններն անցնում են կարգապահական բարձր մակարդակով և գիտելիքների անաչառ ստուգման մեխանիզմներով: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ դիմորդների մեջ են լինում նաև այդ պահին ծառայող ոստիկաններ, որոնց գիտելիքների ստուգումն էլ կարևոր է և արդյունավետ:

ՀՀ ՆԳՆ բարեփոխումների շրջանակներում հանրության շրջանում մեծացել է հետաքրքրությունները ինչպես պարեկային ծառայություն ընդունվելու համար հանձնող քննությունների, այնպես էլ կրթահամալիրի տված գիտելիքների և ուսումնական մեթոդաբանության մասով:

Դա է պատճառը, որ տարիներ շարունակ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրը չի զիջում ՀՀ այլ կրթական հաստատություններին, ավելին ունի ուսանողների համար կրթաթոշակի տրամադրման առանձնահատկություններ, որոնք օգնում են հատկապես մարզերում բնակվող ուսանողներին:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ընդունելության քննության կարևոր մեխանիզմներից մեկն էլ հատուկ ուշադրությունն է սպորտին և դիմողի ֆիզիկական տվյալներին: Շատերը չեն հաղթահարում հենց մարզական ստուգարքները: Ինչը ողջունելի է, քանի որ առանց ֆիզիկական պատրաստվածության քաղաքացին ուղղակի չի կարող դառնալ ոստիկան կամ պարեկ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի թվարկածս այս տարիների քննություններին մեր մասնակցության ընթացքում կարող ենք արձանագրել հետևյալը, որ կրթահամալիր ընդունվող բոլոր դիմորդները անցնում են կարգապահական, գիտելիքների ստուգման և մարզական բարձր պատրաստվածության կարևոր շղթայի միջով, որի արդյունքում կրթահամալիր ընդունվողը ուսումնառությունից հետո հասարակություն է մտնում՝ որպես խելացի, կիրթ և մարդկային բարձր հատկանիշներով ու որակներով օժտված օրենքի պահապան:

Ձեզ ենք ներկայացնում վերջին տարիներին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կողմից անցկացվող քննություններին մեր մասնակցության ժամանակացույցը.

2022թ.-ի օգոստոսի 15-20

2022թ.-ի օգոստոսի 21-30

2023թ.-ի օգոստոսի 15-20

2023թ.-ի օգոստոսի 22-31

2024թ.-ի օգոստոսի 14-31

2025թ.-ի օգոստոսի 16-25

Մեզ համար շատ կարևոր է ՀՀ ՆԳՆ ինտեգրումը միջազգային բոլոր հարթակներում՝ ներկայացնելով կառույցը որպես զարգացող և ժամանակակից հագեցվածությամբ ու ոչնչով ոչ մի երկրին չզիջող համակարգ:

Վստահ եմ, որ նմանատիպ թափանցիկ, շարունակական ծրագրերով, առաջարկներով ու միջոցառումներով մենք կկարողանանք էլ ավելի մեծ առաջընթաց գրանցել՝ հիմքում դնելով ժողովրդավարական արժեքներն ու մարդու իրավունքները:

Կարևոր ու կենսական նշանակություն ունի նաև ՆԳՆ փրկարարական ծառայությունը, որն իր պատրաստվածությունն ու արագ արձագանքման պրոֆեսիոնալիզմը ներկայացրեց վերջերս Լոռու և Տավուշի մարզերում: Չնայած նյութական վնասներին՝ ՆԳՆ աշխատակիցների հմտության շնորհիվ

կարողացանք զերծ մնալ շատ մարդկային զոհեր տալուց: Իսկ բնության տված վնասներն հաշված օրերի ընթացքում փրկարարների ու կամավորների կողմից սկսեց վերականգնվել:

Մեծահարգ տկն Սարգսյան,

«Հայրեններ» հ/կ-ն հավատարիմ լինելով Պետության և Պետականության կայունությանն ու զարգացմանն ուղղված իր գաղափարներին, մշտապես լինելու է ՀՀ ՆԳՆ կողքին՝ գիտակցելով նախարարության կարևորությունը հանրության համար, ոստիկանություն-քաղաքացի փոխհարաբերությունների զարգացող գործընթացը, հասարակության անվտանգությանն ուղղված հսկայածավալ աշխատանքները, միջազգային կառույցների ինտեգրացիան, պարեկային, փրկարար ծառայությունների զարգացումն ու վերելքը:

Հարգանքով՝

«Հայրեններ» հ/կ նախագահ

Մամիկոն Խուրշուդյան